# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 4 | Երկտեղանի աշակերտական սեղան՝ մետաղական կմախքով, նախատեսված 1–4 դասարանների համար: Սեղանը պետք է համապատասխանի ՀՀ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. №12-Ն հրամանի և ԳՕՍՏ 11015-93 պահանջներին (գույներ, չափեր, էրգոնոմիկա): Չափսերը՝ 1200(ե) × 500(լ) × 510–630(բ) մմ, բարձրությունը՝ մեխանիկական կարգավորմամբ: Աշխատանքային հարթությունը՝ 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ, անփայլ մակերեսով, անկյունները՝ կլորացված (R=30 մմ), եզրերը՝ 1–2 մմ հաստության PVC եզրաժապավենով: Աշխատանքային հարթությունը մետաղական կմախքին ամրացվում է 10 հատ 4×40 մմ պտուտակներով: Սեղանի առջևի վահանակը՝ 1150×350 մմ չափսերով, 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ, եզրերը՝ 0.8–1 մմ PVC եզրաժապավենով, տեղադրվում է աշխատանքային հարթության տակ և ամրացվում մետաղական կմախքին: Սեղանի կմախքը պետք է պատրաստված լինի քառանկյուն մետաղական խողովակներից՝ 25×25×2.0 մմ, անկյունների միացումը՝ զոդման եղանակով, 45° հատվածքով: Կմախքի արտաքին չափերը՝ 1150×432 մմ, մետաղական ոտքերը ամրացվում են զոդմամբ: Սեղանը պետք է ունենա 2 զույգ կարգավորվող մետաղական ոտքեր, որոնք կազմված են արտաքին և ներքին քառանկյուն խողովակներից: • Արտաքին խողովակ՝ 25×25 մմ, պատի հաստությունը՝ 1.8–2.0 մմ, բարձրությունը՝ 430 մմ • Ներքին խողովակ (միջուկ)՝ 20×20×2.0 մմ, բարձրությունը՝ 430 մմ Ոտքերի ներքին խողովակները զոդմամբ ուղղահայաց միացվում են հենակին՝ պատրաստված 25×25×2.0 մմ քառանկյուն մետաղական խողովակից, երկարությունը՝ 410 մմ: Հենակին միացվող երկու ոտքերի միջև հեռավորությունը՝ 120 մմ: Հենակի եզրերը պետք է փակված լինեն բաց գույնի պլաստիկ |

| | |
|---|---|
| | խցաններով` 5–6 մմ հաստությամբ, ապահովելով հատակից առնվազն 4 մմ բարձրություն: Սեղանի ոտքերը պետք է ունենան բարձրության կարգավորման 4 դիրք` 40 մմ քայլով, յուրաքանչյուր ոտքը ֆիքսվում է յուրաքանչյուր կողմից 2 հատ հեղուսե մանեկային կապով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված և ողորկ: Կմախքը պետք է լինի ամբողջությամբ ավազահարված, յուղազերծված և ծածկված բարձրակարգ նարնջագույն ջերմային փոշեներկով: Սեղանի երկու կողմերում պետք է նախատեսված լինեն մետաղական կախիչներ, որոնք եռակցվում են կմախքին վերևից` երկու կողմերում, հետնապատից 220 մմ հեռավորության վրա: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Айр ев ворди Гедакяннер в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/75 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 4 | |